3. Տրանսպորտային նյութերի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – **18 458,7 հազ.դրամ**,
4. Գյուղատնտեսական ապրանքների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – **1 243,0 հազ.դրամ**,
5. Կենցաղային նյութերի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում)- **200,4 հազ.դրամ**
6. Հատուկ նպատակային նյութերի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում)- **980,3 հազ.դրամ,**
7. Տրանսպորտային սարքավորումների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – **11 000,0 հազ.դրամ,**
8. Վարչական սարքավորումների ձեռքբերում(գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում)-**2 050,3 հազ.դրամ,**
9. Այլ մեքենաների և սարքավորումների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում)- **2 402,0 հազ.դրամ**
10. Նախագծանախահաշվային աշխատանքների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում- **950,0 հազ.դրամ**
11. Ծառայությունների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում)–**2 650,0 հազ.դրամ:**

| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Բոլոր ծախսերն ուղղված են շահառուներին: Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի և ՀՀ Սյունիքի մարզպետարանի հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հաշվետվություն է ներկայացվում բարեգործին, ինչպես նաև սահմանված կարգ [illegible] հաշվետվություն է ներկայացվում ՀՀ կառավարության բարեգործական ծրագր [illegible] համակարգման հանձնաժողովին և ՀՀ բնապահպանության նախարարությանը |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**05 հունիսի 2015 թվականի N Մ- 591-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ, ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ, ՄԻԱՎ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ» ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 19-ի N 07/80-2/12568-15 և մայիսի 20-ի N 06/3-3/12686-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի մայիսի 15-ի N 02/14/5700-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի մայիսի 14-ի N ԱՄ/22.2/5397-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է .***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից (ՀՎՀՀ՝ 02504895) իրականացվող՝ 50,473,037 դրամ ընդհանուր արժեքով «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելում, բուժօգնություն, ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվություն և ուսուցում» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» ծրագրի մասին» N Մ-1074-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի ենթադրամաշնորհային ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2013 թվականի օգոստոսի 1-ին կնքված՝ N S4002 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի մայիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում



հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 361,752 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ...

2015 թ.

# ՀՀ ԱՆ «ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ, ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ, ՄԻԱՎ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ» ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ(լրամշակված)

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Նվազեցնել ՄԻԱՎ-ի տարածվածությունը Հայաստանի Հանրապետությունում բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի , տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամ |
| | | 1214 Վերներ, Ժնև, Շվեցարիա |
| 4 | Ծրագրի կատարողը | ՀՀ առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ |
| | | ք. Երևան, Աճառյան 2 |
| | | ՀՎՀՀ 02504895 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագրի իրականացման վայրը՝ ք. Երևան և ՀՀ բոլոր մարզեր: |
| | | Ծրագրի բնագավառը՝ առողջապահություն: |
| 6 | Ծրագրի բյուջեն | 50,473,037 (հիսուն միլիոն չորս հարյուր յոթանասուներեք հազար երեսունյոթ) ՀՀ դրամ: |
| 7 | Բարեգործություն ստացողը | ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմամբ զբաղվող բժշկական հաստատությունները, ՄԻԱՎ-ի նկատմամբ բնակչության խոցելի խմբերը, ՄԻԱՎ վարակով 1470 հիվանդներ: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 2015 թվականի ապրիլի 1-ից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը: |



| | | |
|---|---|---|
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Սույն ծրագիրը հանդիսանում է ՀՀ առողջապահության նախարարության «ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի (բարեգործական է որակվել ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի Մ-1074-Ա որոշմամբ, և փոփոխվել 2013թ. ապրիլի 26-ի թիվ Մ-302-Ա որոշմամբ) շրջանակներում ՀՀ ԱՆ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող ենթադրամաշնորհային ծրագիր: |

Ծրագրի շրջանակներում նախատեսված ժամկետներում կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝

| Անվանում | Գնահատված ծախսերը (ՀՀ դրամ) | Ծախսերի իրականացման ժամկետները | | |
|---|---|---|---|---|
| | | 2015թ. II եռամսյակ | 2015թ. III եռամսյակ | 2015թ. IV եռամսյակ |
| **Վերապատրաստում,այդ թվում.** | **2417164** | **1611443** | **805721** | **0** |
| միջազգային կոնֆերանսների, սեմինար-խորհրդակցությունների, հանդիպումների մասնակցության ծախսեր | 2417164 | 1611443 | 805721 | 0 |
| **Մշտադիտարկում և գնահատում, այդ թվում.** | **3421728** | **1710864** | **1710864** | **0** |
| մոնիտորինգային այցեր ԿԽՀ շարժական թիմի կողմից (1 մասնագետ և վարորդ) | 2764548 | 1382274 | 1382274 | 0 |
| մոնիտորինգային այցեր մոնիտորինգային խմբի կողմից (1 մասնագետ և վարորդ) | 657180 | 328590 | 328590 | 0 |
| **Ինֆրակառուցվածք և այլ սարքավորումներ, այդ թվում.** | **1735000** | **720000** | **720000** | **295000** |
| Ավտոմեքենայի պահպանման ծախսեր | 840000 | 420000 | 420000 | 0 |
| Սարքերի պահպանության ծախսեր | 600000 | 300000 | 300000 | 0 |
| Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ | 295000 | 0 | 0 | 295000 |
| **Կազմակերպչական ծախսեր, այդ թվում.** | **915894** | **305298** | **305298** | **305298** |
| Գրասենյակային ծախսեր (գրենական և տնտեսական ապրանքներ) | 915894 | 305298 | 305298 | 305298 |
| **Լուսաբանման նյութեր, այդ թվում.** | **62928** | **31464** | **31464** | **0** |
| Տեղեկատվական/կրթական նյութեր | 62928 | 31464 | 31464 | 0 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Աշխատանքային ռեսուրսներ, այդ թվում.** | **38268819** | **12756273** | **12756273** | **12756273** |
| Աշխատավարձեր | 38268819 | 12756273 | 12756273 | 12756273 |
| **Անուղղակի ծախսեր, այդ թվում.** | **3651504** | **1825752** | **1825752** | **0** |
| Ավտոմեքենայի ապահովագրություն | 77112 | 38556 | 38556 | 0 |
| Բենզին | 3212640 | 1606320 | 1606320 | 0 |
| Կապ. հեռախոսավարձ, ինտերնետ, փոստային ծախսեր | 361752 | 180876 | 180876 | 0 |
| **Ընդամենը 50473037 ՀՀ դրամ** | | | | |

**Ծրագրի բյուջեն ըստ եռամսյակների՝**

| ժամանակահատված | ՀՀ դրամ |
|---|---|
| 2015թ. II եռամսյակ | 18961094 |
| 2015թ. III եռամսյակ | 18155372 |
| 2015թ. IV եռամսյակ | 13356571 |

10 | Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը

Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում են ապրանքների և ծառայությունների ձեռքբերում և մատուցում՝ **50473037 դրամ** ընդհանուր արժողությամբ:

| Նկարագրություն | Նախատեսված բյուջե (ՀՀ դրամ) | Նշումներ |
|---|---|---|
| Միջազգային կոնֆերանսների, սեմինար-խորհրդակցությունների, հանդիպումների մասնակցության ծախսեր (արտասահման մեկնող տեղային մեկ մասնագետի համար) | **2417164** | Օգտվելու է հարկային արտոնություններից |
| Մոնիտորինգային այցեր ԿԽՀ շարժական թիմի կողմից (1 մասնագետ և վարորդ) | **2764548** | |
| Մոնիտորինգային այցեր մոնիտորինգային խմբի կողմից (1 մասնագետ և վարորդ) | **657180** | |
| Աշխատանքային ռեսուրսներ (աշխատավարձեր) | **38268819** | |
| ՀՀ ԱՆ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի գրասենյակային ծախսեր (գրենական և տնտեսական ապրանքներ) | **915894** | Օգտվելու է հարկային արտոնություններից |
| Տեղեկատվական/կրթական նյութեր | **62928** | Օգտվելու է հարկային արտոնություններից |
| ՀՀ ԱՆ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի ծրագրային գործառույթների իրականացման նպատակով | **3212640** | Օգտվելու է հարկային արտոնություններից |



| | | |
|---|---|---|
| ՀՀ ԱՆ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի 2 ավտոմեքենաների ապահովագրություն | **77112** | |
| Ավտոմեքենայի պահպանման ծախսեր | **840000** | Օգտվելու է հարկային արտոնություններից |
| Սարքերի պահպանության ծախսեր | **600000** | Օգտվելու է հարկային արտոնություններից |
| Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ | **295000** | Օգտվելու է հարկային արտոնություններից |
| **ՀՀ ԱՆ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կապի ծախսեր, այդ թվում.** | **361752** | Օգտվելու է հարկային արտոնություններից |
| Ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների ձեռքբերում՝ պայմանագիր N S4002, կնքված 01.08.2013թ. «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ФԲԸ-ի (ք.Երևան, Ահարոնյան 2, ՀՎՀՀ 02500052) և «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև (կցվում է լուսապատճենը) | 361752 | Օգտվելու է հարկային արտոնություններից |

11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը

Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում են կազմակերպչական ծախսեր՝ 1277646 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ:

| Նկարագրություն | Նախատեսված բյուջե (ՀՀ դրամ) |
|---|---|
| Գրասենյակային ծախսեր (գրենական և տնտեսական ապրանքներ) | 915894 |
| Կապ. հեռախոսավարձ, ինտերնետ, փոստային ծախսեր | 361752 |
| **Ընդամենը** | **1277646** |

12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կամակերպություններ հետ

Նախատեսվում է համագործակցություն՝

- ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի,
- ՀՀ ֆինանսների նախարարության,
- ՀՀ առողջապահության նախարարության ստորաբաժանումների,
- ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության,
- ՀՀ ԱՆ «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի,

| | | |
|---|---|---|
| | | - Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ), այլ միջազգային կազմակերպությունների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատամաբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է ներկայացնել հաշվետվություններ՝<br>- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամին,<br>- Հիմնադրամի տեղական գործակալին,<br>- ՀՀ առողջապահության նախարարությանը,<br>- ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

Ծրագիրը կազմեց՝
ՀՀ առողջապահության նախարարության
«ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի
Գլխավոր հաշվապահ
Հեռ. 61-07-30

Ա. Գյուլնազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**05 հունիսի 2015 թվականի N Մ- 592-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի N Մ-458-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
**(«Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 25-ի N 07/80-2/13202-15 և մայիս 26-ի N 6/3-3/13315-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1.Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հունիսի 7-ի «Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամի (ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Պտղունք, Վարդանանց 1, ՀՎՀՀ՝ 01557357) կողմից իրականացվող՝ «Հույսի ճրագ» բարեգործական ծրագրի մասին» N Մ-458-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «2013-2017 թվականներին իրականացվող՝ 11,500,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով» բառերը փոխարինել «2013-2018 թվականներին իրականացվող՝ 4,166,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության [illegible] նախարարություն, Հայաստանի Հանրապետության [illegible] Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, Երևանի [illegible] Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, [illegible], Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի [illegible]:

**ՆԱԽԱԳԱՀ**      **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամի
Տնօրեն Մեթյու Յու. Ղազարյանի կողմից
20 մայիսի 2015թ.

**«Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հույսի ճրագ»**
**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Նյութական, ֆինանսական և բարոյական օգնություն սոցիալապես անապահով ընտանիքներին |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել ՀՀ օրենքով սահմանված հարկային արտոնություններից և վճարներից, ըստ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի 66Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 3-րդ կետի "Բ" ենթակետի |
| 3 | Բարեգործը | ԱՄՆ քաղաքացի, Կալիֆորնիա նահանգի Սիլ Բիչ քաղաքի բնակիչներ, ամերիկահայ բարեգործներ տեր և տիկին Ղազարյանները և նրանց ընտանիքը<br>Մեթյու-Յունիս Ղազարյան Եռովքի (անձնագրի № AA0002802, տրված՝ 21.10.2013թ. 002-ի կողմից)<br>Ջուրար-Բարսեղ Ղազարյան Բարսեղի (անձնագրի՝ № AA0002801, տրված՝ 21.10.2013թ. 002-ի կողմից) |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամ, ք. Երևան, Չարենցի 58-5, ինչպես նաև ՀՀ Արմավիր մարզ, գյուղ Պտղունք Վարդանանց 1, ՀՎՀՀ 01557357 հեռ. 043-500-503, 0 դրամ սակագնով թեժ գիծ՝ 20-80 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ ամբողջ տարածք և ԼՂՀ (սոցիալական) |
| 6 | Ծրագրի բյուջեն | **2013թ. հունվարի 1-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ը բարեգործական ծրագիրը իրականացնելու համար ծրագրի** բյուջեն փաստացի կազմել է $ 573 000 /հինգ հարյուր յոթանասուներեք հազար ԱՄՆ դոլար/<br>Որից ներմուծում՝ $ 415 000 /չորս հարյուր տասնհինգ հազար ԱՄՆ դոլար/<br>Կազմակերպչական ծախսեր՝ $ 78 000 /յոթանասունութ հազար ԱՄՆ դոլար/<br>Ֆինանսական օգնություն շահառու ընտանիքներին $ 80 000/ ութսուն հազար ԱՄՆ դոլար/<br>**2015թ. հունվարի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը բարեգործական ծրագիրը իրականացնելու համար ծրագրի** բյուջեն նախատեսվում է $ 3 593 000 /երեք միլիոն հինգ հարյուր իննսուներեք հազար ԱՄՆ դոլար/<br>2015թ. –$917 000 /ինը հարյուր տասնյոթ հազար ԱՄՆ դոլար/<br>2016թ. –$892 000 /ութ հարյուր իննսուներկու հազար ԱՄՆ դոլար/<br>2017թ.- $892 000 / ութ հարյուր իննսուներկու հազար ԱՄՆ դոլար/<br>2018թ.- $892 000 / ութ հարյուր իննսուներկու հազար ԱՄՆ դոլար/ |
| 7 | Բարեգործության ստացողը | Հասարակության ամենախոցելի խմբերը, սոցիալապես ծայրաստիճան անապահով խավը՝ ըստ սոցապ նախարարության տվյալների.<br>1.Պտղունք գյուղի Տեր և Տիկին Ղազարյանների անվան երկլեզվյան մանկապարտեզ |

| | | |
|---|---|---|
| | | 2.զոհված ազատամարտիկների ընտանիքներ<br>3.փախստական ընտանիքներ (Իրաք, Սիրիա)<br>4.հաշմանդամներ<br>5.հիմնադրամի շահառու ընտանիքներ (բազմազավակ, բնական աղետներից տուժված և կացարան չունեցող)<br>6.աղետից տուժած ընտանիքներ, սահմանապահ, սահմանամերձ և հեռավոր գյուղերի բնակչություն |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 2013թ. հունվարի 1-ից - 2018թ. դեկտեմբերի 31-ը |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | **2013թ. հունվարի 1-ից- 2014թ. դեկտեմբերի 31-ը բարեգործական ծրագիրը իրականացնելու համար ծրագրի բյուջեն փաստացի կազմել է $ 573 000 /հինգ հարյուր յոթանասուներեք հազար ԱՄՆ դոլար/**<br><br>1.Արմավիրի մարզի Պտղունք գյուղի մանկապարտեզի 65 սաների հովանավորություն **$18 000 /տասնութ հազար ԱՄՆ դոլար/**<br>2.Զոհված ազատամարտիկների 5 ընտանիքներին նյութական օգնություն **$2 500 /երկու հազար հինգ հարյուր ԱՄՆ դոլար/**<br>3.Նյութական և ֆինանսական օգնություն Իրաքի, Սիրիայի փախստական ընտանիքներին **$4 200 /չորս հազար երկու հարյուր ԱՄՆ դոլար/**<br>4. Հաշմանդամներին սայլակի տրամադրում **$7 000 /յոթ հազար ԱՄՆ դոլար/**<br>5.Մարդասիրական օգնության բաշխում ՀՀ տարածքում և ԼՂՀ-ում **$ 387 500 /երեք հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր ԱՄՆ դոլար/**<br>6. Ֆինանսական օգնություն 50 շահառու ընտանիքներին **$ 75 800 /յոթանասունհինգ հազար ութ հարյուր ԱՄՆ դոլար/**<br>7. Կազմակերպչական ծախսեր **$ 78 000 /յոթանասունութ հազար ԱՄՆ դոլար/**<br><br>**2015թ. հունվարի 1-ից- դեկտեմբերի 31-ը** բարեգործական ծրագիրը իրականացնելու համար ծրագրի բյուջեն նախատեսվում է $917 000 /ինը հարյուր տասնյոթ հազար ԱՄՆ դոլար/<br>**2016թ. հունվարի 1-ից- 2018 դեկտեմբերի 31-ը** բարեգործական ծրագիրը իրականացնելու համար ծրագրի բյուջեն նախատեսվում է $892 000 /ութ հարյուր իննսուներկու հազար ԱՄՆ դոլար/ տարեկան<br><br>1. Արմավիրի մարզի Պտղունք գյուղի մանկապարտեզի 65 սաների հովանավորություն **$ 6 500/վեց հազար հինգ հարյուր ԱՄՆ դոլար/ տարեկան**<br>2. Զոհված ազատամարտիկների 5 ընտանիքներին նյութական օգնություն **$ 5 000/հինգ հազար ԱՄՆ դոլար/ տարեկան**<br>3. Նյութական և ֆինանսական օգնություն Իրաքի, Սիրիայի փախստական ընտանիքներին **$ 35 000/երեսունհինգ** |



| | | |
|---|---|---|
| | | **հազար ԱՄՆ դոլար/ տարեկան**<br>4. Հաշմանդամներին սայլակի տրամադրում **$ 5 000/հինգ հազար ԱՄՆ դոլար/ տարեկան**<br>5. Մարդասիրական օգնության բաշխում ՀՀ տարածքում և ԼՂՀ-ում **$ 750 000/յոթ հարյուր հիսուն հազար ԱՄՆ դոլար/ տարեկան**<br>6. Ֆինանսական օգնություն 50 շահառու ընտանիքներին **$50 000 /հիսուն հազար ԱՄՆ դոլար/ տարեկան**<br>7. Կազմակերպչական ծախսեր **$ 40 500/ քառասուն հազար հինգ հարյուր ԱՄՆ դոլար/ տարեկան**<br>8. 2015թ-ին նախատեսվում է ներմուծել նոր մեքենա հիմնադրամի ընթացիկ աշխատանքները կազմակերպելու համար, նախկին մեքենայի օտարում՝ անսարքության պատճառով **25.000 /քսանհինգ հազար ԱՄՆ դոլար/** |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 2013թ. հունվարի 1-ից- 2014թ. դեկտեմբերի 31-ի ներմուծումը կազմել է $ 415 000 /չորս հարյուր տասնհինգ հազար ԱՄՆ դոլար/<br><br>2015թ. հունվարի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը նախատեսվում է<br>1. Մանկապարտեզի համար՝<br>Խոհանցի սպասքի, հիգիենայի պարագաների, սրբիչների, անկողնային պարագաների և այլնի ներմուծում; **5 000/ հինգ հազար ԱՄՆ դոլար/ տարեկան**<br>2. Հագուստի ներմուծում զոհված ազատամարտիկի ընտանիքների համար **5.000/հինգ հազար ԱՄՆ դոլար/ տարեկան**<br>3. Հագուստի, կենցաղային իրերի, անկողնային պարագաների և այլնի ներմուծում Իրաքի, Սիրիայի փախստական ընտանիքների համար **25.000/քսանհինգ հազար ԱՄՆ դոլար/ տարեկան**<br>4. Սայլակների ներմուծում հաշմանդամների համար **5.000/հինգ հազար ԱՄՆ դոլար/ տարեկան**<br>5. Հագուստի, կենցաղային իրերի, անկողնային պարագաների և այլնի ներմուծում մարդասիրական օգնություն բաշխելու համար **$ 750 000/յոթ հարյուր հիսուն հազար ԱՄՆ դոլար/ տարեկան**<br>6. 2015թ-ին նախատեսվում է ներմուծել նոր մեքենա հիմնադրամի ընթացիկ աշխատանքները կազմակերպելու համար, նախկին մեքենայի օտարում՝ անսարքության պատճառով **25.000 /քսանհինգ հազար ԱՄՆ դոլար/**<br>7. Կազմակերպչական ծախսեր՝<br>- Գրասենյակային գույքի ձեռքբերում-$ 10000/տասը հազար ԱՄՆ դոլար/տարեկան<br>- Ավտոմեքենայի շահագործման ծախսեր-$5000/հինգ հազար ԱՄՆ դոլար/ տարեկան<br>- Կոմունալ վճարներ-$5000/ հինգ հազար ԱՄՆ դոլար/ տարեկան<br>- Հեռախոսների վարձավճար-$1000/ հազար ԱՄՆ դոլար/ տարեկան<br>- Մաքսատան ծախսեր-$500/ հինգ հարյուր ԱՄՆ դոլար/ տարեկան<br>- Աուդիտի իրականացում-$2000/ երկու հազար ԱՄՆ դոլար/ տարեկան<br>Ընդամենը:<br>Ներմուծում- 2015թ. հունվարի 1-ից- դեկտեմբերի 31-ը - 815 000/ ութ հարյուր տասնհինգ հազար ԱՄՆ դոլար/ |

| | | |
|---|---|---|
| | | 2016թ. հունվարի 1-ից- 2018թ. դեկտեմբերի 31-ը- **$ 2 370 000 /երկու միլիոն երեք հարյուր յոթանասուն հազար ԱՄՆ դոլար/**<br>**Ձեռք բերում ՀՀ-ից- $23 500/ քսաներեք հազար հինգ հարյուր ԱՄՆ դոլար/ տարեկան** |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | 2013թ. հունվարի 1-ից 2014թ. դեկտեմբերի 31-ը ծրագրի այս կետը իրականացնելու համար փաստացի ծախսվել է **$ 78 000 /յոթանասունութ հազար ԱՄՆ դոլար/**<br>2015թ. – **$ 40 500/ քառասուն հազար հինգ հարյուր ԱՄՆ դոլար/**<br>- Գրասենյակային գույքի ձեռքբերում-$ 10000/տասը հազար ԱՄՆ դոլար/<br>- Ավտոմեքենայի շահագործման ծախսեր-$5000/հինգ հազար ԱՄՆ դոլար/<br>- Գրասենյակի աշխատողների աշխատավարձ-$15000/ տասնհինգ հազար ԱՄՆ դոլար/<br>- Կոմունալ վճարներ-$5000/ հինգ հազար ԱՄՆ դոլար/<br>- Հեռախոսների վարձավճար-$1000/ հազար ԱՄՆ դոլար/<br>- Մաքսատան ծախսեր-$500/ հինգ հարյուր ԱՄՆ դոլար/<br>- Գործուղման ծախսեր-$2000/ երկու հազար ԱՄՆ դոլար/<br>- Աուդիտի իրականացում-$2000/ երկու հազար ԱՄՆ դոլար/<br>2016թ. – **$ 40 500/ քառասուն հազար հինգ հարյուր ԱՄՆ դոլար/**<br>- Գրասենյակային գույքի ձեռքբերում-$ 10000/տասը հազար ԱՄՆ դոլար/<br>- Ավտոմեքենայի շահագործման ծախսեր-$5000/հինգ հազար ԱՄՆ դոլար/<br>- Գրասենյակի աշխատողների աշխատավարձ-$15000/ տասնհինգ հազար ԱՄՆ դոլար/<br>- Կոմունալ վճարներ-$5000/ հինգ հազար ԱՄՆ դոլար/<br>- Հեռախոսների վարձավճար-$1000/ հազար ԱՄՆ դոլար/<br>- Մաքսատան ծախսեր-$500/ հինգ հարյուր ԱՄՆ դոլար/<br>- Գործուղման ծախսեր-$2000/ երկու հազար ԱՄՆ դոլար/<br>- Աուդիտի իրականացում-$2000/ երկու հազար ԱՄՆ դոլար/<br>2017թ. – **$ 40 500/ քառասուն հազար հինգ հարյուր ԱՄՆ դոլար/**<br>- Գրասենյակային գույքի ձեռքբերում-$ 10000/տասը հազար ԱՄՆ դոլար/<br>- Ավտոմեքենայի շահագործման ծախսեր-$5000/հինգ հազար ԱՄՆ դոլար/<br>- Գրասենյակի աշխատողների աշխատավարձ-$15000/ տասնհինգ հազար ԱՄՆ դոլար/<br>- Կոմունալ վճարներ-$5000/ հինգ հազար ԱՄՆ դոլար/<br>- Հեռախոսների վարձավճար-$1000/ հազար ԱՄՆ դոլար/<br>- Մաքսատան ծախսեր-$500/ հինգ հարյուր ԱՄՆ դոլար/<br>- Գործուղման ծախսեր-$2000/ երկու հազար ԱՄՆ դոլար/<br>- Աուդիտի իրականացում-$2000/ երկու հազար ԱՄՆ դոլար/<br>2018թ. – **$ 40 500/ քառասուն հազար հինգ հարյուր ԱՄՆ դոլար/**<br>- Գրասենյակային գույքի ձեռքբերում-$ 10000/տասը հազար ԱՄՆ դոլար/<br>- Ավտոմեքենայի շահագործման ծախսեր-$5000/հինգ հազար ԱՄՆ դոլար/<br>- Գրասենյակի աշխատողների աշխատավարձ-$15000/ տասնհինգ հազար ԱՄՆ դոլար/<br>- Կոմունալ վճարներ-$5000/ հինգ հազար ԱՄՆ դոլար/<br>- Հեռախոսների վարձավճար-$1000/ հազար ԱՄՆ դոլար/ |



| | | |
|---|---|---|
| | | - Մաքսատան ծախսեր-$500/ հինգ հարյուր ԱՄՆ դոլար/<br>- Գործուղման ծախսեր-$2000/ երկու հազար ԱՄՆ դոլար/<br>- Աուդիտի իրականացում-$2000/ երկու հազար ԱՄՆ դոլար/ |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերով նախարարություն<br>ՀՀ ոստիկանություն<br>Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ<br>Սփյուռքահայեր, անհատ բարեգործներ |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հոգեբարձուների խորհուրդ<br>Սոցապ նախարարություն<br>Առողջապահության նախարարություն<br>ՀՀ ոստիկանություն<br>Սահմանված կարգով հաշվետվություն ներկայաց[illegible] բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով |

Ծրագրի ղեկ[illegible] Ս.Յու.Ղազարյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**05 հունիսի 2015 թվականի N Մ-** 593 **-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N Մ-413-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 19-ի N 07/80-2/12573-15 և մայիսի 20-ի N 6/5-1/12645-15, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի մայիսի 15-ի N ԱՄ/22.2/5494-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Հայկական ակնաբուժության նախագիծ» կորպորացիայի կողմից ուղարկված՝ «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռը (վիրահատական պարագաներ (ներակնային ոսպնյակներ, քարտրիջներ և կապսուլայի պահպանման օղակներ)՝ 5 տեղ, 43 կգ, 14,569.50 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, փոխադրման ծախսերը կազմել են 600 ԱՄՆ դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 16-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Լույս՝ հայի աչքերին» (յոթերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-413-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**05 հունիսի 2015 թվականի N Մ- 594 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ- 1074-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ**

(«ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 13-ի N 07/80-2/11979-15 ու մայիսի 18-ի N 06/ 5-1/12340-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի մայիսի 13-ի N ԱՄ/22.2/5367-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Գլոբալ ֆոնդի կողմից ստացված բեռը (դեղեր՝ 1 տեղ, 2 կգ քաշով, 241.8 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 4,325 հնդկական ռուփի, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-1074-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**05 հունիսի 2015 թվականի N Մ- 595 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ- 1074-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ**

(«ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր) (1)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 29-ի N 07/80-2/13597-15 ու հունիսի 1-ի N 06/5-1/13708-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի մայիսի 27-ի N ԱՄ/22.2/5992-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Գլոբալ ֆոնդի կողմից ստացված բեռը (դեղ՝ 11 տեղ, 122 կգ քաշով, 7,881.8 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 95,704 հոդկական ռուփի, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-1074-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**05 հունիսի 2015 թվականի N Մ- 596 -Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ- 1074-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ

(«ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր) (2)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 19-ի N 07/80-2/12607-15 ու մայիսի 18-ի N 06/ 18-4/12339-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի մայիսի 18-ի N ԱՄ/22.2/5544-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Գլոբալ ֆոնդի կողմից ստացված բեռը (դեղ՝ 1 տեղ, 0.9 կգ քաշով, 2,088 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-1074-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**05 հունիսի 2015 թվականի N Մ- 597 - Ա**

**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ- 1074-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ

(«ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր) (3)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 29-ի N 07/80-2/13603-15 ու մայիսի 29-ի N 06/5-1/13540-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի մայիսի 27-ի N ԱՄ/22.2/5989-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Գլոբալ ֆոնդի կողմից ստացված բեռը (դեղ՝ 2 տեղ, 187 կգ քաշով, 42,864 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-1074-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**05 հունիսի 2015 թվականի N Մ- 598 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ- 1074-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ

(«ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր) (4)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 29-ի N 07/80-2/13596-15 ու մայիսի 29-ի N 06/5-1/13541-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի մայիսի 27-ի N ԱՄ/22.2/5991-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Գլոբալ ֆոնդի կողմից ստացված բեռը (դեղ՝ 7 տեղ, 83 կգ քաշով, 7,129.68 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 65,265 հնդկական ռուփի, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-1074-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**05 հունիսի 2015 թվականի N Մ- 599 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ- 1074-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ**
(«ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր) (5)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 29-ի N 07/80-2/13600-15 ու մայիսի 29-ի N 06/5-1/13528-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի մայիսի 27-ի N ԱՄ/22.2/5993-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Գլոբալ ֆոնդի կողմից ստացված բեռը (դեղ՝ 10 տեղ, 74 կգ քաշով, 4,109.58 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 59,803 հնդկական ռուփի, «Ձվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-1074-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**05 հունիսի 2015 թվականի N Մ- 600 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-ՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ**

(«ՀՀ-ում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 15-ի N 07/80-2/12147-15 և մայիսի 15-ի N 06/5-1/12238-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի մայիսի 13-ի N ԱՄ/22.2/5355-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռը (լաբորատոր ախտորոշիչ սարքի պահեստամաս՝ 1 տեղ, 3.6 կգ ընդհանուր քաշով, 480.7 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ (2014 թվականի դեկտեմբերի 26-ի N Մ-1339-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**5 հունիսի 2015 թվականի N Մ- 601 -Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՆՍ ՔՐԻՍՏԻԱՆ ԿՈՖՈԵԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 13-ի N 07/80-2/11969-15 և մայիսի 15-ի N 06/5-1/12204-15, Հայաստանի Հանրապետության առողջապահության 2015 թվականի մայիսի 26-ի N ԱՄ/22.2/5906-15 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի մայիսի 13-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/4074-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Կոպենհագենի «Դանարմեն» հայ-դանիական ասոցիացիայի կողմից «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի (7,570 կգ ընդհանուր քաշով, 7,395 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ (50,730 դանիական կրոն), փոխադրման ծախսերը կազմում են 4,000 եվրո, բեռի ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը:

| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները,անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակներում ծավալվող գործողությունները նախատեսված են հետևյալ ուղղություններով՝<br><br>1. Կամավորների կողմից շաբաթական այցելություններ միայնակ տարեցներին<br>Ամեն շաբաթ կամավորները այցելելու են միայնակ տարեցներին կենցաղային գործերում օգնելու և նրանց հետ զրուցելու նպատակով: |

Բյուջեն՝ 14760 եվրոյին համարժեք ՀՀ դրամ
Ժամանակահատված՝ Փետրվար 2015թ. – Հունվար 2018թ.

2. Ամենօրյա կրթական միջոցառումներ հանրակացարանաբնակ երեխաների համար
   Հանրակացարաններում գտնվող և հատուկ վերանորոգված ու կահավորված սենյակներում հանրակացարանաբնակ երեխաների համար կամավորներն շաբաթական 5 օր կազմակերպելու են դասապատրաստման և այլ կրթական միջոցառումներ՝ մաթեմատիկայի, մայրենի և օտար լեզուների, համակարգչի, աշխարհագրության խմբակներ, ինտելեկտուալ և սպորտային խաղեր, նկարչության և երգի դասեր

Բյուջեն՝ 22680 եվրոյին համարժեք ՀՀ դրամ
Ժամանակահատված՝ Փետրվար 2015թ. – Հունվար 2018թ.

3. Մշակութային միջոցառումների կազմակերպում երեխաների համար
   Ծրագրի շրջանակներում պարբերաբար կազմակերպվելու են մշակութային միջոցառումներ /այցեր թանգարաններ, թատրոններ, տեսարժան վայրեր, էքսկուրսիաներ, ազգային տոնակատարություններ և այլն/:

Բյուջեն՝ 11100 եվրոյին համարժեք ՀՀ դրամ
Ժամանակահատված՝ Փետրվար 2015թ. – Հունվար 2018թ.

4. Ծննդյան նվերների տրամադրում, սոցիալական միջոցառումների կազմակերպում տարեցների համար

- Ծրագրում ընդգրկված հանրակացարանաբնակ 120 տարեցների համար նախատեսվում է գնել նվերներ, որոնք ծննդյան օրերին կտրամադրվեն շահառուներին :



- Հանրակացարանաբնակ տարեցների համար նախատեսվում է կազմակերպել սոցիալական և մշակութային միջոցառումներ՝ սոցիալականացումը խթանելու նպատակով:

Բյուջեն՝ 14300 եվրոյին համարժեք դրամ
Ժամանակահատված՝ փետրվար 2015թ.-հունվար-2015թ.

5. Ամիսը մեկ անգամ սննդի փաթեթի տրամադրում հանրակացարանաբնակ տարեցներին

ՀԿԽԸ ծրագրի շրջանակներում ամիսը մեկ անգամ նախատեսվում է սննդի փաթեթների տրամադրում հանրակացարաբնակ միայնակ տարեցներին:

Բյուջեն՝ 79840 եվրոյին համարժեք ՀՀ դրամ
Ժամանակահատված՝ փետրվար, 2015թ. - հունվար, 2018թ.

6. Հիգիենիկ պարագաների տրամադրում

Տնտեսական պայմանների բարելավման նպատակով երեք ամիսը մեկ անգամ նախատեսվում է հիգիենիկ պարագաների տրամադրում ծրագրում ընդգրկված հանրակացարանաբնակ տարեցների համար:

Բյուջեն՝ 20800 եվրոյին համարժեք ՀՀ դրամ
Ժամանակահատված՝ փետրվար, 2015թ. – հունվար, 2018թ.

7. Ձմռան ամիսներին հանրակացարանաբնակ տարեցների կողմից սպառած էլեկտրաէներգիայի վճարի փոխհատուցում՝ ծրագրով

սահմանված գումարի չափով:

Ձմռան ինչպես նաև նախորդող ցուրտ ամիսներին նախատեսվում է կատարել միայնակ տարեցների համար սպառած էլեկտրաէներգիայի վճարների փոխհատուցում՝ ծրագրով սահմանված գումարի չափով:

**Բյուջեն՝ 10800 եվրոյին համարժեք ՀՀ դրամ**
**Ժամանակահատված՝ փետրվար, 2015թ. – Հունվար , 2018թ**

**8. Ամառային ճամբարի կազմակերպում առավել խոցելի երեխաների համար**

Ամռանը հանրակացարանաբնակ երեխաների զբաղվածության և ակտիվության կազմակերպման նպատակով նախատեսվում է ամառային ճամբարի կազմակերպում, որի ընթացքում կիրականացվի կրթական դասընթացներ և ինտեգրմանն ուղղված տարբեր միջոցառումներ: Ճամբարի աշխատանքներն իրականացվելու են ծրագրում ընդգրկված ՀԿԽԸ երիտասարդ կամավորների ակտիվ մասնակցությամբ: Հատուկ մշակված ծրագիրը նպատակաուղղված է լինելու բնության գրկում և անկաշկանդ մթնոլորտում հավելյալ միջոցառումների իրականացմանը: Ճամբարում ընդգրկվելու են առավել խոցելի երեխաները, ովքեր ինտեգրմանն ու սոցիալականացմանն ուղղված հավելյալ միջոցառումների կարիք ունեն, ինչպես նաև նրանք ում ընտանիքները կարիքների գնահատման արդյունքում ճանաչվել են ծայրահեղ աղքատ: Երեխաների ընտրությանը աջակցելու է ծրագրի գործունեության մեջ ընդգրկված հոգեբանը:

**Բյուջեն՝ 18000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ**
**Ժամանակահատված՝ հուլիս-օգոստոս 2015թ. 2016թ. 2017թ.**

9. Ավտոմեքենայի ձեռքբերում
Ավտոմեքենայի ձեռքբերում ՀԿԽԸ ծրագրային գործունեության արդյունավետ իրականացման համար



**Բյուջեն՝ 17260 եվրոյին համարժեք ՀՀ դրամ**
**Ժամանակահատված՝ մարտ- մայիս 2015թ.**

**10. Հանրակացարանում գտնվող ծրագրի գործունեության համար օգտագործվող սենյակի վերանորոգում**

Ծրագրում նոր ընդգրկված ևս մեկ հանրակացարանում պլանավորված գործունեության իրականացման համար նախատեսված սենյակի վերանորոգում: Սենյակը վերանորոգվելու և կահավորվելու է ծրագրի գործունեության պահանջներին համապատասխան:

**Բյուջեն՝ 5760 եվրոյին համարժեք ՀՀ դրամ**
**Ժամանակահատված՝ օգոստոս- հոկտեմբեր 2015թ.**

**11. Ծրագրի կամավորների համար ուսուցողական դասընթացների կազմակերպում**

ՀԿԽԸ անձնակազմը նախատեսում է կազմակերպել սկզբնական և ընթացիկ հանդիպումներ, ուսուցողական դասընթացներ ծրագրում ընդգրկված կամավորների համար: Նախատեսված դասընթացը հնարավորություն կընձեռի կամավորներին ծանոթանալ իրենց պարտականությունների, գործունեության պլանի հետ և ձեռք բերել անհրաժեշտ հմտություններ անհատական զարգացման համար, որը կնպաստի ծրագրի արդյունավետ գործունեությանը և հաջող համագործակցությանը ծրագրի շահառուների հետ:

**Բյուջե՝ 8600 եվրոյին համարժեք ՀՀ դրամ**
**Ժամանակահատված՝ փետրվար 2015թ.-հունվար 2018թ.**

| | | |
|---|---|---|
| | | 12. Տեղեկատվական նյութերի տպագրություն և տարածում<br>Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել տեղեկատվական նյութերի տպագրություն, որը հնարավորություն կընձեռի լուսաբանել ծրագրի գործունեությունը և տրամադրել ինֆորմացիա հնարավոր գործընկերներին և համագործակիցներին:<br><br>Բյուջե՝ 6000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ<br>Ժամանակահատված՝ Փետրվար 2015թ.-հունվար 2018թ.<br><br>13.Ծրագրի արդյունավետությանն ուղղված միջոցառումներ<br>Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել կազմակերպված միջոցառումների արդյունավետության գնահատում, ինչպես նաև դրանց համապատասխանելիությունը ֆինանսական գործառույթների հետ:<br><br>Բյուջե՝ 4800 եվրոյին համարժեք ՀՀ դրամ<br>Ժամանակահատված՝ Դեկտեմբեր 2015թ., 2016թ. և Փետրվար 2018թ.<br><br>Կազմակերպչական և պահպանման ծախսերը կազմում են 42480 եվրոյին համարժեք ՀՀ դրամ: |
| | | |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումները կրթական և սոցիալական բնույթ են կրում, որոնք նպատակ ունեն խթանել շահառուների սոցիալականացման և ինտեգրման գործընթացը: Ծրագրի շրջանակներում իրականացվելու է կամավորների կողմից շաբաթական այցելություններ հանրակացարաններում բնակվող միայնակ տարեցներին, ինչի դիմաց կամավորների համար նախատեսվում է ճանապարհածախսի փոխհատուցում 14760 եվրոյին համարժեք ՀՀ դրամի չափով: Հանրակացարանաբնակ երեխաների համար կազմակերպվող բազմաբնույթ կրթական միջոցառումների համար նախատեսվում է ձեռք բերել ուսուցողական նյութեր և անհրաժեշտ պարագաներ 13320 եվրոյին համարժեք ՀՀ դրամի չափով: Երեխաների համար միջոցառումների |



| | | |
|---|---|---|
| | | կազմակերպման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերման, տրանսպորտային միջոցի վարձակալման, և երեխաներին տրամադրվող սննդի համար նախատեսված է 20460 եվրոյին համարժեք ՀՀ դրամ: Միայնակ տարեցների համար սոցիալ-մշակութային միջոցառումների կազմակերպման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերման, տրանսպորտային միջոցի վարձակալման, և տարեցներին տրամադրվող սննդի, և ծննդյան նվերների ձեռքբերման համար նախատեսված է 14300 եվրոյին համարժեք ՀՀ դրամ: Միայնակ տարեցներին ամիսը մեկ անգամ տրամադրվող սննդի և եռամսյակը մեկ տրամադրվող հիգիենիկ ապրանքների ձեռքբերման, փաթեթավորման և բաշխման գործընթացը կազմակերպելու համար նախատեսված է 100640 եվրոյին համարժեք ՀՀ դրամ: Ձմռան ամիսներին նախատեսվում է կատարել միայնակ տարեցների սպառած էլեկտրաէներգիայի վճարների փոխհատուցում՝ 10800 եվրոյին համարժեք ՀՀ դրամի չափով: Հանրակացարանաբնակ երեխաների համար ամառային ճամբարների կազմակերպման համար նախատեսվում է 18000 եվրոյին համարժեք ՀՀ դրամի: Ծրագրի գործունեության համար նախատեսված մեքենայի ձեռքբերման գումարը կազմում է 17260 եվրոյին համարժեք ՀՀ դրամ: Հանրակացարաններում իրականացվող միջոցառումների սենյակի վերանորոգման համար նախատեսված է 5760 եվրոյին համարժեք ՀՀ դրամ: Ծրագրում ընդգրկված կամավորների համար ուսուցողական դասընթացների կազմակերպման համար նախատեսված է 8600 եվրոյին համարժեք ՀՀ դրամ: Ծրագրի վերաբերյալ լուսաբանման և տեղեկատվական նյութերի մշակման, տպագրման և տարածման համար նախատեսված է 6000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ: Ծրագրի շրջանակներում կազմակերպված գործունեության արդյունավետության գնահատման միջոցառումների համար նախատեսված է 4800 եվրոյին համարժեք ՀՀ դրամ: Կազմակերպչական և պահպանման ծախսերը կազմում են 42480 եվրոյին համարժեք ՀՀ դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական և պահպանման ծախսեր 42480 եվրոյին համարժեք ՀՀ դրամ, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը 39600 եվրոյին համարժեք ՀՀ դրամ (ներառյալ հարկեր), բանկային վճարներ 360 եվրոյին համարժեք ՀՀ դրամ և կոմունալ ծախսեր 2520 եվրոյին համարժեք ՀՀ դրամ: |

ԿՈՄԻՍԻԱ ... PROGRAMS COORDINATING COMMISSION OF THE GOVERNMENT OF RA 02508251

| | | |
|---|---|---|
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Հանրակացարաններում գործունեությունն իրականացվում է ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության, Միգրացիոն պետական ծառայության և <<Հանրակացարաններ>> ՓԲԸ հետ համագործակցությամբ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տրամադրել 6 ամիսը մեկ անգամ և ավարտական հաշվետվություններ նվիրատուին՝ Ավստրիական Կարմիր խաչի ընկերությանը, որի պատվիրակությունն իրականացնելու է պարբերաբար այցեր՝ ծրագրի մշտադիտարկման, վերահսկողության և գնահատման նպատակով:<br>Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվելու է գործողությունների մշտադիտարկում վերահսկում և գնահատում, կազմակերպվելու են այցեր հանրակացարաններ և ամառային ճամբար:<br>Նախատեսվում է հաշվետվություն ներկայացնել նաև ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին՝ ըստ պահանջվող կարգի: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**12 հունիսի 2015 թվականի N Մ- 613 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1237-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի հունիսի 5-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Աջակցություն սիրիահայերին և նրանց կարողությունների հզորացում» ծրագրի մասին» N Մ-1237-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՎԱԳ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00886839) 2015 թվականի հունիսի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական սարքավորումների և գործիքների ձեռքբերում՝ 5,503,140 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**15 հունիսի 2015 թվականի N Մ- 614 - Ա**
(Որոշումն ընդունվել է 2015 թվականի հունիս 5-ին)
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀՈՒՇԱՆՎԵՐՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 21-ի N 07/80-2/12794-15 և մայիսի 22-ի N06/3-3/13007-15 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի մայիսի 22-ի N 02/14/6113-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 14,900,000 դրամ արժողությամբ «Հուշանվերների պատրաստում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գնոմոն» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02556646) 2015 թվականի ապրիլի 15-ին կնքված՝ N 13Ա/015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հուշանվեր «Խաչքարի մանրակերտի» պատրաստում՝ 14,900,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

[illegible] Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Վարչատնտեսական բաժնի տնօրեն
Մուշեղ եպիսկոպոս Բաբայան
«12» 06 2015 թ.

Հուշանվերների պատրաստում

## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համար պատրաստել 1915 թվականի Հայոց Մեծ Եղեռնի նահատակներին նվիրված խաչքարի թվով 10 փոքրիկ մանրակերտներ, բարձրաստիճան հյուրերին նվիրելու համար: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործ (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 06800406: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, բնագավառը՝ հոգևոր: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 14,900,000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, հոգևորականները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 15 մայիս 2015թ. – 20 հուլիս 2015թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համար պատրաստել 1915 թվականի Հայոց Մեծ Եղեռնի նահատակներին նվիրված խաչքարի թվով 10 փոքրիկ մանրակերտներ՝ 14,900,000 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ:<br>Աշխատանքները իրականացվելու է «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ի կողմից (ՀՎՀՀ 02556646 , ՀՀ, Ք. Երևան, Արշակունյաց 12)՝ պայմանագիր կնքված 15.04.2015թ.: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 15 մայիս 2015թ. – 20 հուլիս 2015թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համար պատրաստել 1915 թվականի Հայոց Մեծ Եղեռնի նահատակներին նվիրված խաչքարի թվով 10 փոքրիկ մանրակերտներ՝ 14,900,000 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է [illegible] հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի [illegible] բաժինների և ՀՀ կառավարության [illegible] հանձնաժողովի կողմից: Ծրագրի [illegible] տեղեկատվություն: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**16 հունիսի 2015 թվականի N Մ- 615 -Ա**
**(Որոշումն ընդունվել է 2015 թվականի հունիսի 5-ի նիստին)**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ «ԷՅԼԻԹԻԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲԱՐԵԿԵՑԻԿ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 29-ի N 07/80-2/13599-15 և հունիսի 1-ի N 06/3-3/13718-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի մայիսի 29-ի N 04/14/6326-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի մայիսի 26-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/4475-15 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2015 թվականի մայիսի 27-ի N 01/2580-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքի «Էյլիթիա» ՀՈԱԿ-ի կողմից իրականացվող՝ 20,327,872 դրամ արժողությամբ «Բարեկեցիկ մանկություն» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Էյլիթիա» ՀՈԱԿ-ի կողմից (ՀՎՀՀ՝ 05539164) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մ. Լամբարյան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06800406) 2015 թվականի մայիսի 22-ին կնքված N 03/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերանորոգման շինարարական աշխատանքների իրականացում՝ 20,327,872 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքի «Էյլիթիա» ՀՈԱԿ-ին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Էյլիթիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության
տնօրեն՝ Լիլիթ Համբարձումյանի կողմից

22 ----05---- 2015թ.

# ՙՙԲԱՐԵԿԵՑԻԿ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆՙՙ
# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Գյումրու ՙՙԷյլիթիաՙՙ ՀՈԱԿ նախադպրոցական ուսումնական հաստատությունում անվճար հիմունքներով հաճախում են անապահով ընտանիքների մոտ 150 երեխաներ: Հաստատությունում նրանք ստանում են նախադպրոցական կրթություն: Հաստատությունում դասավանդում են որակյալ մանկավարժներ, որոնք անում են ամեն ինչ, որպեսզի երեխաները ստանան լիարժեք դաստիարակություն և կրթություն:<br>Սակայն ուսումնական գործընթացին խիստ խանգարում են հաստատության շենքի, մասնավորապես՝ ննջասենյակների մասնաշենքի պայմանները. կաթում է տանիքը, անմխիթար վիճակում են սանհանգույցները, էլեկտրական սնուցման, ջրամատակարարման համակարգերը, բացակայում է կենտրոնացված ջեռուցումը:<br>Ծրագրով նախատեսված է 2015թ-ի ընթացքում վերանորոգել Գյումրու«Էյլիթա» ՀՈԱԿ նախադպրոցական ուսումնական հաստատության ննջարանների մասնաշենքը, կատարել էլեկտրական, սանտեխնիկական, ջեռուցման և ջրամատակարարման համակարգերի վերականգնման աշխատանքները: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | Ամբողջ ծրագիրը ֆինանսավորում է հայ-ամերիկյան ՙՙԾնողազուրկ և հաշմանդամ երեխաների Սուրբ Ծնունդՙՙ բարեգործական հիմնադրամը (PO BOX250 38, GLENDELALE, CA9125, Tel. 8182460125 ): |
| 4 | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն անմիջականորեն կազմակերպող, իրականացնող և պատասխանատու է հանդիսանում «Էյլիթիա» ՀՈԱԿ-ը *(հասցե՝ Գյումրի, Գարեգին Ա. փ N 4 ՀՎՀՀ 05539164).* |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է ք. *Գյումրի, Գարեգին Ա. փ N 4* հասցեում: Ծրագիրն առնչվում է սոցիալական և կրթական ոլորտներին: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ննջասենյակների մասնաշենքի վերանորոգման աշխատանքները կազմում են 20՛327՛872 դրամ |
| 7 | Բարեգործություն ստացողը | Գյումրի «Էյլիթիա» նախադպրոցական ուսումնական հաստատություն հաճախող 3-ից 6 տարեկան անապահով ընտանիքների մոտ 150 երեխաներ |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը իրականացվելու է 2015թ. մայիսի 1-ից մինչև 2015թ. նոյեմբերի 30ը |
| 9 | Միջոցների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2015 թ-ի մայիսի 1-ից մինչև 2015թ. նոյեմբերի 30ը Ննջասենյակների մասնաշենքի վերանորոգում 20.327.872 (քսա միլիոն երեք հարյուր քսանյոթ հազար ութ հարյուր յոթանասուներկու ) դրամ գումար |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման ընթացքում իրականացվելու են վերանորոգման աշխատանքներ, որի համար արդեն կնքվել է շինարարական կապալի պայմանագիր «Մ.Լամբարյան» ՍՊԸ-ի հետ (ք. Սպիտակ, Մ. Ավետիսյան 274, ՀՎՀՀ 06800406) Պայմանագրի արժեքն է 20.327.872 (քսա միլիոն երեք հարյուր քսանյոթ հազար ութ հարյուր յոթանասուներկու ) դրամ գումար: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրով կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է Գյումրիի քաղաքապետարանի կրթության բաժնի հետ |
| 13 | Ծրագրի արդյունավետության գնահատման և վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հիմնական վերահսկողությունը իրականացվում է ֆինանսավորող բարերարի կողմից, ինչպես նաև հարկային մարմինների և ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողովի կողմից: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**17 հունիսի 2015 թվականի N Մ - 616 - Ա**

**(Որոշումն ընդունվել է 2015 թվականի հունիսի 5-ի նիստին)**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1297-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 11-ի N 07/80-2/11538-15 և մայիսի 6-ի N 06/3-3/11077-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Տավուշի մարզի Բերդավան համայնքի մանկապարտեզի խմբասենյակների հիմնանորոգում» ծրագրի մասին» N Մ-1297-Ա որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Կամրջակ» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Օջախ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04417737) 2015 թվականի ապրիլի 27-ին կնքված N 15-1 պայմանագրում (2015 թվականի հունիսի 1-ի համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 24,669,210 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատված է
«Կամրջակ» ՄԲՀԿ
տնօրեն Բ. ԱՂԱՄԱԼՅԱՆԻ կողմից
«16» հունիսի 2015 թ.

# Տավուշի մարզի Բերդավան համայնքի մանկապարտեզի խմբասենյակների հիմնանորոգման ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Տավուշի մարզի Բերդավան համայնքի մանկապարտեզի խմբասենյակների հիմնանորոգում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնությունից |
| 3. | Բարեգործը | «LITTLE BRIDGE SWITZERLAND» NGO, նախագահ Տիկին Հայդե Աղեկյան Քինը, Շվեցարիա (Giacometti stasse134.7000 Chur, FO0569480): |
| 4. | Ծրագիրն կատարողը | «Կամրջակ » ՄԲՀԿ-ն, իրավաբանական հասցե՝ քաղ. Երևան, Զ. Քանաքեռցու 129/5, ՀՎՀՀ՝ 01003187,<br>Հեռ՝ 516-044, Ֆաքս 56-13-03 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն Տավուշի մարզի Բերդավան համայնք, բնագավառը՝ սոցիալական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընհանուր բյուջեն կազմում է 31,070,210 դրամ: «Կամրջակ » ՄԲՀԿ-ի միջոցներ՝ 30,070,200 և Բերդավանի համայնքի միջոցներ՝ 1,000,000 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Տավուշի մարզի Բերդավան համայնքի մանկապարտեզ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2014 թվականի մայիսի 16-ից մինչև 2015 թվականի սեպտեմբերի 30-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Նախագծանախահաշվարկային փաստաթղթերի կազմվել է "ԻՋՆԱՄ" ՍՊԸ-ի կողմից, որը կազմել է 1725000 (մեկ միլոն յոթհարյուր քսանհինգ հազար դրամ) – 2014 թվականի մայիս – 2014 թվականի հուլիս (ավելացված արժեքի հարկ չի առաջանում):<br>Ներքին դռների և լուսամուտների փոփոխման համար «ՄՄՄ»ՍՊԸ-ի հետ կնքվել է կապալի պայմանագիր՝ 4676000 (չորս միլիոն վեց հարյուր յոթանասուն վեց հազար) դրամ – 2014 թվականի մայիս – 2015 թվականի հուլիս:<br>Շինարարական աշխատանքների կատարման համար կնքվել է կապալի պայմանագիր – 24,669,210 դրամի չափով: |
| 10. | Ձեռք բերվող(ներմուծվող) ապրանքներերի նու ծառայությունների համառոտ նկարագիրը,ծավալները և նախատեսվող գինը | Նախագծանախահաշվարկային փաստաթղթերի կազմվել է "ԻՋՆԱՄ" ՍՊԸ-ի կողմից, որը կազմել է 1725000 (մեկ միլոն յոթհարյուր քսանհինգ հազար դրամ):<br>Շինարարկան աշխատանքների կատարման համար կնքվելու է կապալի պայմանագիր, իսկ արտաքին և ներքին դռներ և լուսամուտների փոփոխման համար «ՄՄՄ»ՍՊԸ-ի հետ կնքվել է պայմանագիր 4676000 (չորս միլիոն վեց հարյուր յոթանասունվեց հազար) դրամ:<br>Շինարարական աշխատանքների կատարման համար կնքվելու է կապալի պայմանագիր – 24,669,210 դրամի չափով:<br>Բերդավանի համայնքի միջոցները՝ 1,000,000 դրամ ծախսվել են նախագծային փաստաթխթերի կազմելու վրա և հարկային արտոնություն չեն ստացել |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում : |
| 12. | Համագործակցությունը,պետական կառավարման ,տեղական ինքնակառավարման մարմինների,այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացվում է «Կամրջակ» ՄԲՀԿ-ի կողմից համագործակցելով Տավուշի մարզի Բերդավան գյուղի գյուղապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է և համայնքի ղեկավարի կողմից, իսկ աշխատանքները կատարելուց հետո, սահմանված կարգով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին կներկայացվի հաշվետվություն |

«Կամրջակ»ՄԲՀԿ-ի տնօրեն Բենյամին Աղամալյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 հունիսի 2015 թվականի N Մ-617-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի N Մ-133-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի հունիսի 17-ի համաձայնեցման թերթը,* **ո ր ո շ ո ւ մ է.**

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված արհեստական մարզադաշտի պարագաները (մեկ տեղ, 3,700 կգ ընդհանուր քաշով, 2,232 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 20-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացմանը» ծրագրի մասին» N Մ-133-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**19 հունիսի 2015 թվականի N Մ- 618 - Ա**
(Որոշումն ընդունվել է 2015 թվականի հունիսի 5-ին)
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՋԵՐՄՈՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 22-ի N 07/80-2/13029-15 և մայիսի 26-ի N 06/3-3/13288-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի մայիսի 22-ի N 04/14/6114-15, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության 2015 թվականի մայիսի 22-ի N 1/02.3/6689-15, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2015 թվականի մայիսի 22-ի N ՍԿ/ԳՂ-2/3303-15 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2015 թվականի մայիսի 26-ի N 01/21/2576-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 82,105,680 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի համայնքներում ջերմոցների կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ջերմատեր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02255442) 2015 թվականի ապրիլի 27-ին կնքված՝ N ՀՀ/ՏՋ-2/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նշված քանակի ջերմոցների կառուցում և տեղադրում՝ 51,395,400 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Զավիրան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07610665) 2015 թվականի ապրիլի 27-ին կնքված՝ N ՀՀ/ՏՋ-01/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նշված քանակի ջերմոցների կառուցում և տեղադրում՝ 29,738,280 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Շինկենտրոն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03300044) 2015 թվականի ապրիլի 27-ին կնքված՝ N ՀՀՏՀ-04/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նշված քանակի ջերմոցների կառուցման տեխնիկական հսկողություն՝ 616,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Շինկենտրոն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03300044) 2015 թվականի ապրիլի 27-ին կնքված՝ N ՀՀՏՀ-03/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նշված քանակի ջերմոցների կառուցման տեխնիկական հսկողություն՝ 356,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«14» մայիսի 2015թ.

# « Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի համայնքներում ջերմոցների կառուցում »
# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | -սահմանամերձ գյուղերի բնակիչներին բանջարաբոստանային կուլտուրաների մշակմամբ զբաղվելու շահագրգռելու,<br>-գյուղացիների սննդամթերքի խնդիրների լուծմանը նպաստելու,<br>-գոյատևելու պայմաններ ստեղծել սահմանամերձ գյուղերից չհեռանալու համար՝<br><br>100 քառակուսի մետր մակերեսով ջերմոցներ կառուցել և անհատույց հանձնել (նվիրատվության պայմանագրի համաձայն տաս տարի չօտարելու պայմանով) վիճակահանության սկզբունքով ընտրված ընտանիքներին Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հետևյալ գյուղերում.<br><br>Դիտավան-8<br>Այգեհովիտ- 8 |



| | | |
|---|---|---|
| | | Վազաշեն – 5<br>Խաչարձան – 2<br>Բաղանիս -4<br>Կիրանց – 6 |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3 | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ<br>(ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիտավան, Այգեհովիտ, Վազաշեն, Խաչարձան, Բաղանիս և Կիրանց համայնքները, գյուղատնտեսության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է՝ 82.105.680,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիտավան, Այգեհովիտ, Վազաշեն, Խաչարձան, Բաղանիս և Կիրանց համայնքները |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015թ ապրիլի 27 -ից մինչեւ 2015թ.օգոստոսի 27-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2015թ ապրիլի 27 -ից մինչեւ 2015թ. օգոստոսի 27-ը ջերմոցներ կառուցել Տավուշի մարզի Դիտավան, Այգեհովիտ, Վազաշեն, Խաչարձան, Բաղանիս և Կիրանց համայնքներում՝ 82.105.680,00 դրամ արժողությամբ: |

| | | |
|---|---|---|
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Ջերմատեր» ՍՊԸ-ի կողմից Դիտավանում, Այգեհովիտում և Վազաշենում ջերմոցների կառուցում՝ 51.395.400,00 ՅՅ դրամ առանց ԱԱՅ-ի:<br><br>«Շինկենտրոն» ՓԲԸ-ի կողմից տեխնիկական հսկողության իրականացում՝ 616.000,00 ՅՅ դրամ առանց ԱԱՅ-ի:<br><br>«ՁԱՎԻՎԱՆ» ՍՊԸ-ի կողմից Խաչարձանում, Բաղանիսում և Կիրանցում ջերմեցների կառուցում՝ 29.738.280,00 ՅՅ դրամ առանց ԱԱՅ-ի:<br><br>«Շինկենտրոն» ՓԲԸ-ի կողմից տեխնիկական հսկողության իրականացում՝ 356.000,00 ՅՅ դրամ առանց ԱԱՅ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Յամագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Տավուշի մարզպետարանի հետ . |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՅՅ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

## Յայաստանի Յանրապետության Տավուշի մարզի համայնքներում ջերմոցների կառուցման շահառուների ցանկը

**1. Խաչարձան**

1. Շահնազարյան Գագիկ
2. Ավագյան Կամո

**2. Բաղանիս**

1. Սահակյան Արկադի
2. Բեգլարյան Թաթուլ
3. Սահակյան Արտավազդ
4. Ղուկասյան Աշոտ Ս.

**3. Կիրանց**

1. Ասիրյան Գարիկ
2. Ավալյան Յենրիկ
3. Ասիրյան Ատոմ
4. Նազարյան Ալվարդ
5. Ափինյան Ռաֆիկ
6. Սիմոնյան Գևորգ

**4. Վազաշեն**

1. Բաղիյան Լորիկ
2. Գրիգորյան Սերյոժա
3. Գաբրիելյան Ռադիկ
4. Սարիստյան Սամվել
5. Սահակյան Միսակ

## 5. Այգեհովիտ

1. Գևորգյան Ալբերտ
2. Առուստամյան Իվան
3. Սիմոնյան Վարդան
4. Սիմոնյան Արմեն
5. Գևորգյան Սուրեն
6. Վարդանյան Յուրիկ
7. Եսայան Արթուր
8. Վարդանյան Ավետիք

## 6. Դիտավան

1. Սարիբեկյան Արշակ
2. Գաբրիելյան Վարուժան
3. Սարիբեկյան Արգամ
4. Ավետյան Ռազմիկ
5. Զաքարյան Քաջիկ
6. Մանուչարյան Ժորա
7. Հախվերդյան Արմեն
8. Սարիբեկյան Հակոբ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**19 հունիսի 2015 թվականի N Մ- 619 - Ա**
**(Որոշումն ընդունվել է 2015 թվականի հունիսի 5-ի նիստին)**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N5)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 19-ի N 07/80-2/12628-15 և մայիսի 20-ի N 06/18-4/12688-15, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի մայիսի 18-ի N ԱՄ/22.2/5551-15 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդություն-ների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 2015 թվականի հունիսի 18-ի N 139/44 գրությունը,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ուղարկված բեռի (սառնարան-սենյակ, 8 տեղ, 2,336 կգ ընդհանուր քաշով, 18,520 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 3,527.13 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**25 հունիսի 2015 թվականի N Մ- 620 -Ա**

**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2015 թվականի հունիսի 24-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ֆրանսիայի ատոմային և այլընտրանքային էներգիայի կոմիսարիատի շրջական միջավայրի վերահսկողության և վերլուծության դեպարտամենտի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության հասցեով ստացված սեյսմիկ սարքավորումները (3,175 կգ ընդհանուր քաշով, 53,722 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 7,650 եվրո, ՄԾՓ մաքսատուն):

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությանը՝ նշված բեռի ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ